

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 37/14

ք.Երևան

29 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ Ա/Ձ Ժաննա Մալխասյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐՁԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Ա/Ձ Ժաննա Մալխասյանը հայտնում է, որ պետական ռեգիստրում գրանցվել է 07.05.2018թ.: Սակայն ունեցել է առողջական խնդիրներ և 2018թ. մայիսի 8-ից գտնվել է ինտենսիվ բուժումների մեջ:

Մայիսի 15-ից մինչև 22-ը գտնվել է ստացիոնար բուժման մեջ, որպես անկողնային հիվանդ «Էրեբունի» սրտաբանական կենտրոնում: Այնուհետև, անկողնային ռեժիմով գտնվել է տանը՝ մինչև մայիսի 29-ը: Պետական գրանցումից հետո 20-օրյա ժամկետը լրացել է մայիսի 27-ին, որը եղել է կիրակի օր, իսկ մայիսի 28-ը՝ ոչ աշխատանքային օր:

Ա/Ձ Ժաննա Մալխասյանը հայտնում է նաև, որ ներկայացել է իր հաշվառման վայրի հարկային մարմին մայիսի 29-ին, սակայն արդեն իսկ բաց էր թողնված շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու ժամկետը:

Ա/Ձ Ժաննա Մալխասյանը խնդրում է թույլ տալ հետագա գործունեությունն իրականացնել շրջանառության հարկի դաշտում:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Ա/Ձ Ժաննա Մալխասյանը ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում պետական գրանցում է ստացել 07.05.2018թ.:

Ա/Ձ Ժաննա Մալխասյանը ս.թ. մայիսի 15-ից մինչև 22-ը գտնվել է ստացիոնար բուժման մեջ:

Ա/Ձ Ժաննա Մալխասյանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում չի ներկայացրել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նույնա-
նորը (բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած առևտրային կազմակերպությունը կամ

որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված կամ որպես նոտար նշանակված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար, որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև համապատասխանաբար՝ որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատված ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ:

Քննարկվող դեպքում Ա/Ձ ժաննա Մալխասյանի կողմից սահմանված կարգով և ժամկետում հարկային մարմին չի ներկայացվել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Ա/Ձ ժաննա Մալխասյանը նշում է, որ իր կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը հիվանդ լինելու պատճառով: Սակայն Հանձնաժողովը գտնում է, որ բերված փաստարկը չի կարող հիմք հանդիսանալ դիմում-բողոքը բավարարելու համար, քանի որ Ա/Ձ ժաննա Մալխասյանը ստացիոնար բուժման մեջ է գտնվել մայիսի 15-ից մինչև 22-ը: Այսինքն, պետական գրանցում ստանալուց հետո մինչև հայտարարությունը ներկայացվելու վերջնաժամկետը եղել է բավարար ժամանակ, որի ընթացքում Ա/Ձ ժաննա Մալխասյանը կարող էր ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Միևնույն ժամանակ, դիմում-բողոքում չի ներկայացվել այլ հիմնավոր փաստարկ (ապացույց)՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառների վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից, Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ ժաննա Մալխասյանը 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող չի կարող համարվել:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ա/Ձ ժաննա Մալխասյանի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

Ռ. ՄԱՇԱԴՅԱՆ

